

ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Նախընթաց տարիներու մամ, այս տարի եւս, 13 Յունուար, Երկուշաբթի երեկոյեան ժամը 6:30-ին, Կաղամոյի մախօրեակին, Ժառնգ. Վարժարանի մշաւարահին մէջ - որ այս անգամ մախորդ տարիներէն աւելի շքեղօրէն ու մշակաւոր կերպով զարդարուած էր, տօնածառով միատեղ - տեղի ունեցաւ "Կաղամոյ Պապայի համդէս" անունով ծամօթ յիշեալ հաւաքոյթը, մախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ ի մերկայութեան Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներուն, ուսուցիչներուն, աշակերտութեան եւ Ս. Աթոռոյ հրաւիրեալ պաշտօնէութեան:

Վարժարանի քայլերգով - "Սիրտ ի Սիրտ" - բացուած հանդէսը տեսց ծամ ու կէս: Վարժարանի աւագ ուսուցիչներէն Պր. Ամդրամիկ Զէյթունեան ըրաւ հակիրճ բացման խօսքը: Այս տարի ճիշտ էր գեղարուեստական բաժինը, որուն մէջ մաս առաւ ուսանողութիւնը: Դաշմամուրիմ վրայ կ'ըմկեցեալ Վարժարանի Երոպական Երաժշտութեան բազմամեայ եւ փորձառու ուսուցիչ, Պր. Վահէ Գալայնեանը: Խմբերգներու կարգին, Ռումանիայէն ծամամած Ընծայարանի ուսանողներ իրենց երկրին լեզուով երգեցին: Ս. Ծննդեան քաղցրալուր մեղեդի մը երգուեցաւ Ամզլերէնով եւ Լատիներէնով (Venite Adoremus): Արտասանութեան համար ըմտրուած կտորները յարմար էին պահին ու առիթին:

Կաղամոյ Պապայի ծամամումէն ետք մերկաներ ստացան իրենց մուրները: Հանելի էին ամոր միմոսութիւնները, երբ կ'երթեւեկէր կիսամութ սրահին մէջ: Նմամապէս "հիւմիւրով" էին համմումած իր խօսքերն ու խրատները՝ ուղղուած ծառանգաւորներուն:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ըրաւ փակման խօսքը, որուն ընթացքին ամդրադարձաւ եկեղեցիէն մերս կատարուած արարողութիւնները աւելի վայելուչ ու գրաւիչ դարձնելու համար կիրարկուելիք ամիրաժեշտ միջոցներուն մասին: Յորդորեց ուսանողները որ հոգւով եւ գիտակցութեամբ ընեն ընթերցումները եւ երգեն Ս. Պատարագի եւ ծամերգութեանց մեղեդիները: Ի լրումմ իր խօսքին, Ն. Ամենապատուութիւնը շնորհաւորեց բոլորին Նոր Տարին եւ Տէրումակամ Աղօթքի երգեցողութեամբ վերջ տուաւ հանդէսին:

ԾԱՆՈԹԱՆ ԵՆՈՐՀԱՌՈՐԱՆԷ

Պատրիարք Սրբազան Հայրը Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի առիթով իր բարեմաղթութեանց եւ շնորհաւորամքի գիրերը յղեց Հոգեւոր եւ Կառավարական պետերուն, որոնց շնորհաւորագիրերը ընդունած է.-

- Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազմագոյն Կաթողիկոսին:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին:

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գազանմեանին:

- Հռովմէական Կաթողիկ եկեղեցւոյ Սրբազան Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապին:

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալեքսյ Բ. Սրբազան Պատրիարքին:

- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն: